




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԲՈՐԴԻ ՏԱՐԻ

ԵՐԲՈՐԴԻ ՏԱՐԻ


ԹԻԻ 113

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇՐՈՒՄԻ ԴԱՐԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

1914

Տ Ա Ր Ո Ւ Յ Ն

Առաջիկայ 1914են սկսեալ « Հանդես Ամսօրեայ »ի ֆննութեան առարկայ պիտի ըլլան մասնաւորապէս Հայ ազգագրութիւնն, ժողովրդագիտութիւնն, ճարտարապետութիւնն, պատմութիւնն, գեղարուեստն եւ— դիցաբանութիւնն համեմատական կրօնախօսութեան (vergleichende Religionswissenschaft) անենամոտազոյն մեթոդով:

Տարեկան բաժնեգինն է Կանխիկ վճարմանը

Տանկասանի համար		15 Ֆր. 72 դ.
Ռուսասանի »		6 ռուբլի
Ամերիկայի »		3 դոլար

Հասցեն է՝

RÉDACTION DE LA REVUE „HANDS AMSORYA”

VIENNE (Autriche), VII/, Mechitharistengasse 4



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի Թ 20 Սեպտեմբեր 1913 Թիւ 113

«Մըազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւճազանց շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մըազան Հայրն արտաքին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարգ. Մերի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պողոս Պետրոս Ժ. Թեքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԷՊՔՆԵՐ ԵՒ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ԻՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Օրմանեանի Աղդապատումին վրայօք վերջին յօդուածով ներկայացուած գրաքննականին առթիւ կ'արժէ զիտել այն դժբախտ կացութիւնը որուն զատապարտուած է հայ էջմիածնական եկեղեցին, և որու անմիջական և սրամարանական անխուսափելի հետեւութիւնն է իր վերջնական քայքայումը:

Իբրեւ ընդհանուր դիտողութիւն՝ պէտք է նկատի առնունք զլիսաւոր պատճառ մը այս մօտալուտ քայքայումի, այն է՝ իր հերձուածը և աւստրիականացումը: Բնագիտական սկզբունք մըն է որ երբ մարմնոյ մը

մէջ կը սպրդի կը մտնէ իր բաղադրութենէն բոլորովին օտար — որով և թշնամի — տարր մը, այդ մարմնը վաղ կամ անագան, դատապարտուած է ապականութեան: Եկեղեցին՝ ըստ իր աստուածային կազմութեան, մի է և Առաքելապետին վրայ հիմնուած, ունենալով իր նուիրապետական պաշտօնեաները: Քրիստոս Պետրոսին ըսաւ. Ի վերայ այդք վիմի շինեցից զԵԿԵՂԵՑԻ իմ, և ոչ թէ՛ զԵԿԵՂԵՑԻս: Ուրեմն ով որ, և որ և իցէ խումբ որ, այս միութենէն դուրս է, նախ՝ եկեղեցի չէ, ապա՝ հետեւաբար, կորնչելի: Նոյնպէս Քրիստոս Պետրոսին ըսաւ. Արածեա՛ր՝ զոչխարս իմ, և ոչ թէ՛ ոչխարքն արածեսցեն զԵԿ. Ուրեմն՝ աւետարանական ստուգութեամբ կը հետեւի որ՝ այն խմբակը որ զինքը եկեղեցի կ'անուանէ, բայց որ ժողովրդային վարչութեան է կոթարկուած, արդէն փտութիւնը իր մէջն ունի և ան-

պատճառ պիտի քայքայի. զի իր դիրքը հասական է և հակառակորդական:

Այս ընդհանուր պատճառներէն զատ, կրնան նշանակուիլ նաև ուրիշներ ալ, որոնք էական չըլլալով հանդերձ, կարի նկատելի են, այնու զի հարկաւոր պատահումնք են, ինչպէս կղերականաց՝ գրեթէ ընդհանուր դարձած աւազելի Տգիսուքիւնը¹. Ընդհակառակն ատոնց քիչ մը բան գիտցողներուն՝ գրեթէ ընդհանրապէս սնկրոնութիւնը: Նոյնպէս՝ գրեթէ ընդհանրացած սիմոնականութիւնը: Ի՞նչու ուրիշ պատճառներ, զորս լաւագոյն է սքողել:

Բայց ասոր ամէնէն ազէտալին է կրօնական անտարբերութիւնը, զոր յամառութեամբ և յանդգնօրէն կը դաւանի էջմիածնական Եկեղեցին. Անխրակաճութիւնը, որով իրեն համար նոյն է ձերմակն ու սեւը, ճշմարտան ու սուտը, բարին ու չարը: Որ և իցէ մոլորութիւն կը յարգուի այդ եկեղեցիէն. որ և իցէ հերետիկոսութիւն՝ գոյութեան և մեծարուելու իրաւունք կը վայելէ՝ ըստ գաւառական էջմ. Եկեղեցւոյ: Բաւական է որ խմբակ մը ինք գինքը քրիստոնեայ յորջորջէ, ամենախորթ և ամենաաղանդակ վարդապետութիւններ իսկ դաւանելով, էջմ. Եկեղեցին իր խոնարհի անոր առջև յարգանք և կը հաղորդակցի: Որ և իցէ նորեկուկ վարդապետութիւն կրնայ ընդգրկել էջմ. Եկեղեցին՝ առանց վարանելու, առանց վայրկեան մը իսկ խորհելու կամ սատամն լսել թէ Աւետարանի դէմ կը մեղանչէ:

Ահա էջմ. Եկեղեցւոյ ամենաստուկալի մեղքը, մոլորութիւնը, կործանարար գրութիւնը, ցեցն ու մէցը: Արդէն անսկզբունք, արդէն կիսակործան, կը պարզէ խանդարումի ու եղծումի ամէնէն սոսկալի ու սղբալի երեւոյթը: Այն քանի մը կենդանիները, որոնց բաժնուած է իր թէ իրեն կենսականութիւնը, և որոնք պահապան գրուած են իր գոյութեանը և տեւականութեանը, ահա՛ առ

¹ Զայս ամենափայլուն կերպով կ'ապացուցանէ քահանայից գատուն համար վերջերս կազմակերպուած դասախօսութիւնը, ցուալի թէ՛ իբր պէտք մը, թէ՛ իբր ճիշդ ստեղծ մոլորութիւն ուսուցանելու:

նոնք են զխաւորարար որ ոչի ի բռին կը գործակցին ու կ'աշխատին այդ խեղճ էջմ. Եկեղեցւոյ կործանման գործին, կը շտապեն առ դժխեմ բայց անխուսափելի ճակատագիրը:

Ա. էջմիածնի Աթոռը, իր սնահարազատ շաղորդութեամբ¹, իր բարձր նուիրապետութեան անխոտոտմանելի կամ նոյն իսկ էջմիածնականներէն մերթ մերթ ձաղկուած՝ բարոյական հանգամանքներով որ գինքը անհունապէս կը ստորնացնեն, իր համակամ ստրկութեամբ, նաև ի հոգեւորաւ, աշխարհական իշխանութեան և աշխարհական տարրին առջև, էջմիածնի Աթոռը օր ըստ օրէ կը խախտի, և հանապազօրեայ յամառութեամբ կը խախտէ կրօնքին հիմերը: Ահա ստարանի վարդապետութեան դէմ ամուսնու լուծումներ կը տեղացնէ. մոլորութեան և հերետիկոսութեան դէմ ո՛չ միայն չընդվզիր, չի մաքառիր, այլ կ'ընդունի զանոնք անբացատրելի անտարբերութեամբ. իրեն համար նշանակութիւն չունին մոլորութեան դէմ Բրիստոսի Վաչիրը, Առաքելոց շանթերը, Պօղոսի Անաթեմաները, Ս. Ժողովոց և Ս. Հարց խորոտ, ապահապիչ և հարկեցուցիչ նպովքները: էջմիածնի Աթոռը եպիսկոպոսաց և վարդապետաց կրօնական մոլորութեամբ լի յօգուածներուն առջև չունենար՝ ո՛չ թէ վսեմ, այլ նոյն իսկ սովորական շարժում. ո՛չ միայն չի դատապարտեր զանոնք, այլ ստեղծ կը գովէ իսկ և կը վարձատրէ՝ այդպիսի վարդապետները եպիսկոպոս կը ձեւնադրէ. այդպիսի եպիսկոպոսաց արքեպիսկոպոսութիւն կու տայ: էջմիածնի Աթոռը այն գլխաւոր մը չունի թէ ինքը ճշմարտութեան դոհապանն է, սուսնապանն է. թէ ինքն է դատաւոր, պլուխ և վարդապետ... Բայց մենք սխալ ըսինք. էջմիած-

¹ Կ'տկնարկենք անվաւերական ընտրութեան (1441) Կիւսկոս Արքեպիսկոպոսի որ յափշտակիչ հակութեամբ մը եղաւ Գրիգոր թ. օրինաւ որ Կաթողիկոսին, և էջմիածնի հաստատուեցաւ և այսօր կը շարունակէ իր սուրբնաւոր յաջորդութիւնը: Պէտք չէ բնու տեսութիւնէ վերաբերել մեր Եկեղեցական պատմութեան այդ էական մէկ կէտը:

նի Աթոռը չի կրնար ունենալ այս զգացումը, քանի որ ՄԻ և ՃՇՄԱՐԻՏ Տեղեկագրերն, Պետ-րոսի Աթոռէն բաժնուած է, քանի որ Որթէն կտրուած ու կծկուած ցամքած ուն մըն է, քանի որ ինք չունի անեղծ, անկեղծ, ան-աղարտելի և անկողոպտելի Վարդապետու-թիւնը, Ճշմարտութիւնը, Բանալիները, Իշ-խանութիւնը՝ սորվեցնելու, արածելու եւ զտեղելու... Ահաւասիկ իրեն այս զգացումէ զուրկ ըլլալու եղելութիւնն իսկ ցայտուն ապացոյցն է իր մոլորութեան: Էջմիածնի Ա-թոռը զուրկ է նաեւ սրբութեան աղբիւր ըլլալէ: Նուիրապետութիւնը նկատի չառնելով այս հանդամանքին մէջ, կը պակսի իրեն. նաեւ այն սրբութիւնը որ անհատներու արտաքոյ կարգի և գերբնական սրբութեամբ՝ Աստու-ծոյ սքանչելիքը, Աստուծոյ մօտաւորութեան և իր շնորհաց անմիջական գործակցութեան ապացոյցը կը փայլեցնէ թէ՛ անհատին, թէ՛ եկեղեցւոյն վրայ: Էջմիածնական եկեղեցիին մէջ ալ բնականաբար ցամքած է սրբութեան այդ երկնաբուլի աղբիւրը՝ ինչպէս միւս հե-րետիկոս բոլոր եկեղեցեաց մէջ, յորս կար-ծես Աստուծոյ բարկութեան գետնաշարժը չորցուցած է այդ կենսաբուլի աղբիւրը, կամ երկնային վրէժինդրութեան կայծակը զօսացուցած է այդ կենսապտուղ ծառը:

Էջմիածնայ Աթոռը և ոչ իսկ կը վայելէ գերիշխանութիւն իր հասարակութեան մէջ: Ինչ ալ որ ըսուի, Մայր Աթոռ Լն., բնաւ այն գերակայութիւնը չունի՝ ինչ որ պէտք է ունենայ Նուիրապետը: Անուանական է այն հնազանդութիւնը զոր ստորակարգ պաշ-տօնեայք կը պարտին իրեն: Յանպատիժս կրնայ հետեւ իրեն օրինակի համար, Թուր-քիոյ պանծալի՝ աղգ. Ժողովը, նոյնպէս և կղերը: Էջմիածնայ Աթոռը սլարգապէս պեր-ճանքի ցոյց մըն է, զարդարուած մեծելի մը նման, զոր կը խնկեն, որ կեանք չունի եւ չի տար, և ընդունած յարգանքը՝ յետինն է, գերեզմանի եզրին վրայ:

Ասկէ կարելի է դիւրութեամբ մակածել և հետեւեցնել Էջմիածնական եկեղեցւոյ միւս հատուածներուն ալ վիճակը. եթէ արեւ ենթադրուածը ստոած և խաւարին զան-

գուած մըն է դարձած. ինչ պիտի ըլլայ վի-ճակը այն ճշմարիտ մոլորակներուն որ անոր շուրջը կը թափառին՝ լուսոյ և տաքի նուազ շող մը մուրալով...

Բ. Աղբաւմար չ'արժեր և ոչ իսկ որ անուան-ուի՝ ամէն տեսակէտով:

Գ. Սոյ շնորհազարդ Հայրապետութեան մասին կրնանք միեւնոյն բաները կրկնել, ինչ որ գրուեցան Էջմիածնի Աթոռին վերաբեր-մամբ: Դեռ վերջին օրերս Սոյ այդ կաթո-ղիկոսը ողբալի օրինակ մը տուաւ քրիստո-սամերժ Անխարականութեան: Մարաշական նամակի մը ձեւին առի յոխորաշունչ բա-ցարութիւններով արձանագրուած է Բիւ-զանդիոնի 5124 թիւին մէջ, 17/30 Օգոստոս 1913, Ա. էջ. Ի մէջ այլոց կ'ըսէ. «Մարաշու-Բողոքական ազգայիններ Ն. Ս. Օծուքիւնը իրենց եկեղեցին հրաւիրեցին հոգեւորապէս մխիթարելու հայ բողոքական հասարակու-թիւնը: Բարեհաճեցաւ Ս. Կաթողիկոսը եր-թալ այս կիրակի եւ հոն խօսեցաւ մին իր պերճախօս քարոզներէն:» Ինչ խօսեցաւ ար-դեօք, այդ շնորհազարդ Օծուքիւնը, բողո-քական եկեղեցիին մէջ, բողոքականները մխիթարելու համար II. «Պատշոն, կ'ըսէ նամակագիրը, սկսաւ Պատշոնի Աբրահամ Թովմասեանի աղօթով»: Տեսէ՛ք, կատարեալ հոգեւոր հաղորդակցութիւն: «Շնորհազարդ Հայրապետը «Տո՛ւր ինձ իմաստութիւն» բնաբանով սկսաւ իր քարոզին... եւ ըսաւ. «Դուք կ'ըսէք բեմեմ Աւեսարանական եմբ. — Մենք ալ աւետարանական ենք»: — Կը տեսնէ՞ք, ո՛վ ընթերցող, որպիսի հան-դուրժողականութիւն, մանաւանդ թէ բո-ղոքականաց հետ միութիւն, թէ և քրիստո-սամերժ, հոգ չէ... Տեսէ՛ք ինչ կ'ըսէ Ն. Ս. Օծութիւնը. «Մեկ է մեր նախահայրը». — ինչպէս Հրեայք կ'ըսէին՝ Հայր մեր Աբրահամ է. մի է նայր մեր (Յովհ. Ը. 39, 41): Կ'ըսէ, Միանա՛նք. և յուզիչ պատճառ մը կը ցու-ցադրէ. «Հեռու ըլլանք միջնադարեան խա-ւարաններէն»: Ըսել կ'ուզէ, Միանա՛նք, թէ և Գրիստոսի հետ չըլլալու պայմանաւ: Դեռ կան, այս պերճախօս քարոզին մէջ, Ն. Ս. Օծութեան օժեալ գլուխ-գործոցները: Կը խրատէ որ Մայր եկեղեցւոյ զաւակները բոլ

չոխորսան որ իրենց հարազատներ են եւ հեմարիս գաւակները Քրիստոնեայ Հայ Եկեղեցւոյն» : Բողոքականներն ալ հարազատ են!! ամէն արատաւոր, մոլորեալ, խաւարեալ, ամէն քրիստոսամարտ, կրօնամարտ, ամէն աղանդաւոր հարազատն է՝ Քրիստոնեայ, բայց ոչ-Ուղղափառ Հայ Եկեղեցւոյն !! Շնորհազարդը կը շարունակէ չրթունքներէն չնորհ սփռել կամ... հայոյութիւն. — «Բողոքականք բող չոխորսան որ իրենց Պապերու բռնակալութեան դէմ մարտնչելով բողոքող եղան եւ հետեւաբար լուսաւորողներ» : Դիւցազնական կտոր ! մզկոտած ոխի փքին . մահահրաւէր շառաչիւն ! Շնորհազարդ Հայրապետը Բողոքականաց apothéose կ'ընէ . Բողոքականներ = Լուսաւորողներ ! (Մի՛ վրդովիր, ո՛վ սուրբ Ածիւն Գրիգորի Լուսաւորչի ! ..) : Որպիսի մեծ փառք է Հռոմայ Ս . Քահանայապետաց՝ աշպէս նախատուիլ...

Այդ Հայրապետը կը զայրացնէ իւր ժպրնութիւնը ու կ'ըսէ . Մեր նախահայրերն ալ բողոքեալ են եւ մարտնչեալ Պապերու բռնակալ եւ կաշկանդող մոլեռանդութեան դէմ . — Շնորհաւորելի՛ ընկերակցութիւն Բողոքականներու հետ... ոճիրի մէջ : Բռնակալ, կաշկանդող, մոլեռանդութիւն բռնորդ նախապատմութեան դէմ նախապիտեալ են եւ սուտ յերիւրանք . մենք կապեալ Քրիստոսի ենք . չենք կրնար շարժիլ յաջ եւ յահակ . Քրիստոսի գոցած շրջանակը մենք չենք կրնար բանալ, ընդլայնել . ընդարձակել . ատիկա տրուած է միայն այս տեսակ շնորհազարդներու եւ նրմանեաց . որոնք ազատամտութիւն, ազատ կրօնք, մարդկային մտքի եւ կամքի անկախութիւն, վերջ ի վերջոյ ni loi, ni roi, ni Dieu կը դաւանին... հետեւաբար հիմնովին սուտ է թէ՛ յընդհանրի, մեր նախահայրերն ալ մարտնչած ըլլան... Հռոմայ Ս . Աթոռին դէմ . խրոխտաբար կը մերժենք այդ ստութիւնը՝ յանուն հայութեան . մեր յերանունը հող հայ չի նշանակել ընդհանրապէս, այլ կը նշանակէ հայ մոլորեալներ, որ չեն որդիք Ս . Գրիգոր Լուսաւորչի, ո՛չ ներսիսեանց, ո՛չ անթիւ ուղղափառ նախահարց մերոց, որոնք յարգեցին, ճանչցան Հռոմայ Ս . Ա-

թորը եւ հպատակեցան Անոր . այլ ձե՛ր նախահայրերը, անսաստ, անուղիղ եւ անուղղայ . որոնք յամառեցան Նօթարապի ծանօթ բանաձեւին մէջ . Լաւ եւս է փաթրոցը բան բեղոյրը... զի Երէ որդիք Աբահամու էիք, զգործսն Աբահամու գործեիք... դուք առնեք զգործս հօրն ձերոյ (Յովհ. Ը.) : — Կ'ըսէ այս Հայրապետը բողոքականներուն, իր պերճախօս քարոզին մէջ . «Համամիս եղբայրներ ենք, մեզմէ մի՛ զատուիք» : — Ի՛նչ սէր եւ համերաշխութիւն, որպիսի՛ գործաւոր եւ աղէխարչ կո՛չ : — Դուք, բողոքական արեւնակից պաւակներս, ինձմէ լսել, հաւատքի ջուրը բնակել ուզեցիք . ես չզրպայ եւ առաջին անգամ քլլալով հայ կաթողիկոս մը բողոքական բեմի վրայ կը բազմի... Ամուր բռնեցեք հաւատքը :

— Զոհողութեան ըսելիք չկայ . Բայց սրբապաշտութիւն մըն է զոր Շնորհազարդը կը գործէ՝ ինքզինքը Քրիստոսի դիրքին մէջ դնելով, որ Սամարացի կնոջմէն ջուր ուզեց որ չտուաւ . Լրէի եւ Սամարացիի խնդիր, կ'ըսէ . ինչո՞ւ չի շեշտեր Քրիստոսի այն դիրքին մէջ տուած օրինակին վրայ, Նա ըսաւ կնոջ . Փրկութիւն ի Լրէից է . ճշմարտութիւնը յայտնի քարոզեց, եւ վերջապէս համոզեց կինը ու պարագաները եւ դարձի բերաւ, ո՛չ թէ զանոնք հաստատեց իրենց մոլորութեան մէջ . Ըսել է թէ հողեոց փրկութեան եւ հերետիկոսութեան խնդիրները Քրիստոսի պէս չ'ըմբռնեն շնորհազուրկներու պաշտպան այդ Շնորհազարդը,

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Ի Ի Զ Ի Ի Ն Զ Ի Ի Պ Ա Պ

Յիսուս Քրիստոսըն Ալլաիլըդը եալընըզ օնուն միայի պուլունմայան օխմարեան քոճ օլունմազ : — Եալընըզ պիւր Ալլաիլըն սաթը օլապիլէն պազը ճելզ էլ տա՛ ճիլլէրի օաթի օնուն Ալլաիլըդըն աօիքաւ սուրէթէ իգիար իսէրլէ :

(Տեղամի)

Պինաէն ալէյ՛ Քրիստոսաւքի Ֆէվդ էթ թապիաթ զուվլէթլէրին քէմալը սէրպէսիթի

իլէ ալէմէ կէօսթէրիմէսի, ընդն բլանընա խատիմ օլմագտան զիյատէ զարարլը օլա-
ճագտը: Ալլահանի պիր էֆէնտի էլինտէ պու-
լընմագ հիսսիյաթը հէր նէ գատար տա միւ-
թէսէլլի վէ նէճիպ իսէտէ, էզիճի պիր գու-
վէթին տարիէի տարպէսի իլինտէ պուլուն-
մագ, հիւրըրիյէթի վէ ազլը թագգիտ իտէր:
Էյէր Բրիստոս պիլա իհթիյաթ քէնտի ֆէվզ
էթ թապիւթ գուվէթինի իսթիմալ էյլէմիշ
օլսա, Մէսիյալը, պիր տէմիր չուպուգլա միւ-
լէթէրի իտարէ էտէր վէ չէօմէքճի չանազը
կիպի սուհուլէթլէ ընլարը գըրար եօլունտա
թաավիր էյլէյէն էսկի բէյղամպէրլիքլէրին տէ
քէնտիսինտէն օ միսիլու ինթիզարաթտա
պուլունուլմագա միւսաթտ օլտուղը իւզլէ
հէմէհրիլէրին պէքլէտիյի վէճի իլէ հարա-
քէթ իթմիշ օլսա, օ վագըթ ինսանլարտա
նասըլ իւէլաս գուպիլ օլաճագընը անլայամա-
լըվ, Օ ֆէվզ էթ թապիւթ, քէնտիսի իս-
թիմալ էյլէյէն ֆէթմանէթ վէ լութֆա պիր
մէտար օլաճագ եէրտէ, ապէս վէ պէյնուտէ
զըլաճագտը. քիմէր հագգընտա քի գուլլա-
նըլըյօրսա, ընլարըն մէլէքէ վէ թապիւթլա-
րընը տա զէնճիրպէնտ իտէճէք վէ տօնտու-
րաճագտը, Իշթէ Բրիստոս քէմալը իթինա
իլէ պուլունտան իճթինապ էյլէտի: Քէնտի
ֆէվզ էթ թապիւթ գուլտըթինի սարֆ էթ-
մէք իսուսուսընտա զայէթ իհթիւթլը տաւ-
րանտը: Օնուն թագպիպ էթտիյի էսաս շու-
իտի քի, քէնտիսի ինսանլարըն հայաթընը
մանվ էթմէք տէյիլ, գուլթարմագ իշուն
կէօնտէրիլմիշ իտի, վէ պիլ ֆիլ տախի հէր
քիմէ օլուրսա օլսուն, պիր գարար վէ եա
պիր ֆէնալըզ իրաս էթմէքտէն պէզայէթ իհ-
թիւթ էյլէտի: Պու. մէսլէքտէ օ գատարսէ-
պաթլա տէվամ էթտի քի նիհայէթ օնուն
պու հալի հէրքէսճէ թանրլար, շէր քէս պի-
լլորի քի պու գատար շահանէ թասավուր-
լարը օլան պու բասիլահ, նիհայէթսիզ սու-
րէթտէ սապըրըլ իտի վէ էն սէրթ թէնդի-
տաթա, էն շէտիտ, վէ էն շէտիր հիւճիւմ-
լէրէ թէհամիւլ էտէպիլիթտի: Օնուն թէ-
սավուրլարը վէ թապիւթը հագգընտա սէր-
պէսթճէ միւպահասա օլունուրար: Քլնտիսի
տիլնէյէն իալզ, ապ իլէ օնուն թալիմաթ-

լարընը տիլնէմէլէրինտէ մանի օլաճագ մու-
ճիպը իսէվֆ պիր հալ կէօլմէտիքտէն մատա,
եաւալա՝ եաւալ, օնտաքի գուվէթին ֆար-
զընտա օլմագլա պէրապէր, պիր տիւլմէնէ
պիլէ կէօսթէրմէյէ թէրէտուիւտ իթտիյի էօլ-
չիւսիւզ պիր շիտտէթլէ օնունլա մուսմէլէ
իթմէյէ պաշլատը: Ղարիպ պիր րապըթասըզ-
լըպա, Յիսուսըն շէյթան իլէ իթթիֆագը վար
օլտուղընը իտտիա էտիյօրլարտը, եանի էօլ-
չիւսիւզ պիր ֆէնալըզ եաբապլիլի իտտիա-
պընտա պուլունուլըրլարտը: Տօղրուլը սէօյլէ-
մէք իշուն, իալզ օնա քէնտի րիզասըլա
քեաֆֆէի իգթիտարընտան վագ կէշմիշ նա-
զարըլա պագըյօր, վէ պէօյլէ զանն իթմէյէ-
տէ հագգը վար իտի, չիւնքի Յիսուս քէն-
տիսի գուլատան էհալիւտէն կէօրտիլիւ հա-
գարաթա միւսթահագգ օլտուղլարը ճէզայը
վէրմէյիպ, եալընը թէքտիլ իլէ քիֆայէթ
էտէրտի: Իշթէ պու եիւզտէն օնլար միւճի-
զաթլար իշլէմէյէ քեաֆի օլան գուվէթինի
նագարը իթիպարա ալմագսըզըն եաւալ
վաշ օնուն էօմիլնիւ մուսիւագա իտէճէք
գատար ճէսարէթ ալտըլար:»¹

Պիր Բրօթէսթան միւլէլիֆին պու կիւզէլ
վէ եէնի միւլահագալարը շայանը թագտիլ
կէօրիւմիւշ տիր: Պու Յիսուս Բրիստոսըն
բարլայան սիմասընըն թէքմիլ պիր թարա-
ֆրուր: Պու կիւնքի թէրագգը եալընը իլմ
մէյտանընտա օլմայուպ, թէնգիտաթ սահէ-
սինտէ տախի իլէրի կիտիլմէքտէ տիր. պա-
լատէքի ֆըգրալար պու տէտիյիմիզ պիր
իսպաթ թէշքիլ էտէրլէր: Բրիստոսըն պու,
հիւննի րիզասըլա քեաֆֆէյի իգթիտարըն-
տան վագ կէշմէսի, հէմ իլմինին վէ հէմ
մէհագալէթինին նէթիճէսի օլան օ նիհայէթ-
սիզ թէքլիֆսիզլիք, հէր քէսին քէնտիստէ
մէվճուտ օլտուղընը պիլիպ տէ եինէ քիմէյի
գօրպուլթման օ գուվէթ, գուվէթինի
սուլի իսթիմալ էտէմէյէճէյի հագգընտաքի
դոնտաթը ումուլիյէ, միւճիզաթլար իշլէմէյէ
քեաֆի օլան գուվէթինի նագարը իթիպա-

¹ Պու ֆըգրալար, պիր գաշ սէնէ էվիլ ինկի-
թէրատա (Ecce homo) իթէ աշէմ իւնֆանըրա մի-
էլիֆինին իսի պէլի օլմայարտգ նէշը օլագիտն էսէլ-
տէն ալընըլ սըրլար:

րա աշխատանքն իսկ ինքն օգնութիւնս մուտ-
խաղայա ճէսարէթ էթմէսի, թէքար տէրիմ
քի պունար եէնի, վէ տէրին օլուպ Յիսու-
սըն սահիհ սիմար իւղէրինէ հէմ թաթլը վէ
հէմ բարլագ պիր նուր սէրքէրլէր:

Քէնտինաէ մէվճուտ օլտուղը հալտէ, հիչ
պիր թահրիքեաթ, հիչ պիր թէհլիքէ հիչ պիր
իհանէթ, հիչ պիր հագարէթ սէպէպիլէ քէն-
տի մէնֆաաթընա գուլլանըմատըլը օ պէ-
յիւք գուվվէթի, եալընը պիր քէրթէտէ,
եանի, պաշգալարընա խայր էթմէք խուսու-
սընտա զապթ էտէմէգտի: Պիր սէֆիլէ, պիր
խաաթէյէ բաստ կէլտիմի, հէման պու գուվ-
վէթ, մէհապլէթ Ֆիլիլէրինին գալպտէն
սուհուլէթլէ գաշնատըլը կիպի, պիր չիմէք
սիւրաթըլա գաշնար վէ թէէսսիլինի կէօս-
թէրիլ իտի: Պազէն սէ օ գուվվէթէ հիչ սա-
հիպ տէյիլտի տէնիլէպիլիւրաի, հասըլ քի
«Նալընըլ էլպիսէսինին բէշինէ սօգունապիլ-
սէմ, սաղալըր, չիֆա պուլուրտըմ» տէյէն
խաաթէնին սլչագ կէօնիլլիլիւքէ քէնտինէ
եաղլաշարընտա վագը օլտույա: Պազը սը-
րալարտա Յիսուս կէօլ եաշլարը տէօքէրաի,
զալէսանա կէլիւրաի, մէհապլէթլինին պէօյիւք-
լիլիւնէ տէլալէթ էտէն զայըլ իխթիյարի
պիր ալթիւսթլիւք կէօսթէրիւրաի: Նայիմաէ
վէֆաթ էթմիշ օլան պիր տանէճիք էվլատըն
վէ օնուն կէօլ եաշլարը տէօքէն վալիտէսի-
նին եանընա նէ կիպի պիր շէֆագաթլա
կիթտիլինի խաթըրլամայան վա՛ր մը: Յայ-
րօսըն գըզընա գըյամ վէրտիլի վազըթ օնուն
իւղէրինտէ, հէր նէ զատար զապթ էթմէյէ
չալըլըյօրտույա տա, եինէ տէ հիսս օլու-
նան տէրին թէէսսիլինի ֆարգընտա պու-
լունմայան վա՛ր մը: Ղազարօսըն մէզարը
գարշընտա օնտա կէօրիլէն Ֆէվգ էլ ատէ
հէյէճանը ունութմագ գապիլլմի աիր: Ֆագաթ
պու թէէսսիլիլէր, պու հէյէճանլար, օնուն
միւճիգաթլար իշլէմէյէ քեաֆի օլան գուվ-
վէթլինին պուլընտըլ սիւքիւնէթլի տայիլէյէ
աաթիլ օլամաղարտը: Էն ալի սըրըլար ա-
րալընտա սաքին վէ բուշէն կէօրիլտիլիւ
կիպի, էն պէօյիւք միւճիգաթլար եաթաղը
վագըրթտա սաքին վէ բահաթ սըր: «Էն աաթ
պիր շէյ եաթաթմաթնա էօլիլէրէ գըյամ վէ-

րիր, էպէտի պիր ույգույա ույուեանլարա
աաթիւրանէ սէօյլէր, վէ օնուն ալիլիլէր վէ էօ-
լիլէր Ալլանը օլտուղը հիսս օլունուր: Ալիլ-
ալա շէյլէր եաթաղը վապթ, սայիլ վա-
գըրթլարտա տահա զիյատէ բահաթ պուլու-
նուրտը:»¹

(Մապաշի վար)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ս. Ն.

յիսիկ ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան
որ ընդ միմեանս վասն Գարոյիկութեան, եւ յա-
ղագս որոյ յայտնեցոյ ումեմն երկրորդ յուսաւորիչ
կոչեցեցոյ յոմանց, եւ վասն նորին գործոց եւ
վարուցն, եւ վասն հաւախոհից նորին:

(Շար.)

Աստանօր մինչ այսպիսի փառաւորութիւնս
էր, եկն և եհաա ժամանակ ուխտաւորացն
Ս. Երուսաղէմի, որ ամ յամէ գնան հաւով
ի Ս. երկիրն: Իսկ վերո գրեալ Ագրիանացի
քահանայքն, զորս ի քիւրէկ արկին ի ժա-
մանակս Եփրեմ վարդապետին, որ եւ մնա-
ցին անդ՝ քան զտարի մի սակաւ ինչ պա-
կաս. զնոսա ջանացեալ ոմանք հանեն ի քիւ-
րէկէն թէպէտ, սակայն նոքա ոչ կարէին
գնալ յետրէնէ. զի մի՛ միւսանգամ զնոսա ի
խոռվութիւն շարժեցեն. վասն որոյ վտա-
րանդի յիստամպօլ աստանդական շրջէին: Եւ
իբրեւ լուաւ Աւետիք վարդապետն, որ յայն-
ժամ յետրէնէ էր, եթէ երիցունքն այնոքիկ
եղեալք են և շրջին յիստամպօլ՝ կրկին զֆէր-
ման առեալ վասն նոցա, զի զնոսա միւսան-
գամ ի քիւրէկ գիցեն: Եւ զայս լուեալ յա-
ռաջագոյն յոմանց քրիստոնէից՝ շեշտակի
ազգեցին յիստամպօլ. զի զքահանայան փա-
խուսցեն որ և արարին իսկ: Ապա զկնի փա-
խստեան նոցա եկն Ֆէրմանն և աստ և անդ
չատ որոնեցին զնոսա և ոչ գտին: Յետ այ-
սորիկ ապա եկն Աւետիք Փաթրիկն Իստամ-
պօլ վասն ուխտաւորացն հաւաքելոյ, և զնա

¹ Massillon, sermon sur la divinité de Jésus-Christ.

ըմբռնեալ և զուխտաւորան եզ ի նաւ : Ապա զմիջնորդս ի մէջ արկեալ և ասաց թէ եկեա-
ցեն քահանայքն խորէնու ընդ իմ և տացեն
ինձ քսակ մի գրամ¹, և ես տարայց զնոսա
ի քաղաքս իւրեանց և հաստատեցից զնոսա
յեկեղեցիս իւրեանց : քանզի յոյժ մեղք և
վնաս եղև նոցա, վասն որոյ գլխամ ի նոսա
և սաստիկ երգեմամբ և կեղծաւորութեամբ
հաւատարմացոյց զնոսա : Եւ բերեալ զքա-
հանայսն առ նա և նա սիրով ընկալան զնո-
սա և ասաց բերէ՛ք զմի քսակ գրամն : Բայց
միջնորդքն ասացին թէ տացուք քեզ քսակ
մի գրամի զձեռագիր, և յորժամ հաստատեա-
ցես զնոսա ի տեղիս իւրեանց՝ յայնժամ վը-
ճարեացուք քեզ : Եւ այնու պայմանաւ եզ
զքահանայսն ի նաւ ուխտաւորացն, և ինքն
ևս եմուտ ի նաւ և ելին ի Թէքֆուր Տաղի²
և անդ զոր ինչ արար առ ուխտաւորսն՝ ծանր
համարիմ գրեալ և ձեզ ձանձրութիւն : Եւ
ապա յեա աւուրց ինչ եղեալ անտի և քա-
հանայքն ընդ նմա և մտին յէտրէնէ : և իբրեւ
մտին յէտրէնէ, արձակեաց զքահանայսն գնալ
ի տունս իւրեանց և ուրախանալ ընդ ընտա-
նիս և ընդ ծանօթս իւրեանց :

Եւ յեա երից աւուրց յերեկոյի պահուն
կոչեալ զքահանայսն զայնոսիկ և եզ զնոսա
ի խուց իմն և էտրկ յոստ նոցա զշղթայս և
փակեաց զխուցն, զի յառաւօտն տարցէ
զնոսա ի դիւան Վէզիրին և մասնեացէ զնո-
սա թէ սոքա են որ ինքեանք Փռանիկ եղեալ
են և զայլս յազգէս մերմէ զարձուցանեն ի
կրօնս իւրեանց : և ահա ես զար զսոսա ի
տունս Փռանսըզ էլչուն³ և անտի պատրա-
նօք եւ խաբէութեամբ հաղիւ հանեալ՝ և
պծի առաջի քո : և այլ սոյն նման բանս
յօդելով ի վերայ նոցա, կամէր զի տացէր
զնոսա ապանանել : Մտկայն զայս չար խոր-
հուրդս ոմանց զխոսացեալ և եկեալ անկա-
նէին յոստ նորա, մաղթէին և աղաչէին, զի
արձակեացէ զնոսա և խոստացան աալ նմա

զրազում կաշառս և նա ոչ երբէք լուաւ
նոցա :

Իբրեւ տեսին արքն զի ոչ լսէ աղաչա-
նաց նոցա, ապա դիմեցին ի խուցն, յորում
արգելեալ էին երիցունքն շղթայւք, և խոր-
տակեցին զգուրս խցին և մտեալ ի ներս՝
կորզեալ զշղթայսն յոտից նոցա և արձակե-
ցին զնոսա և ասացին թէ փախեալք ոյ-
սուհեաւ զի մի միւսանգամ անկանիցիք ի
ձեռն սորա, որ և փախեան : և մինչ նոքա
ի փախուցանելն էին, իբրեւ լուաւ Փաթ-
րիկն Աւետիք եթէ կորզեալ և խորտակեալ
են զգուրս բանտին և թէ փախուցանել կա-
մին զբանտեալսն յարեալ և աճապարեալ
ընդդէմ եկաց նոցա, և անդ յոյժ կռիւս եւ
զաղմուկս արարեալ սոքա եւ նոքա ընդ մի-
մեանս երկու կողմունքն : Բայց սոքա լա-
զումք եւ բռնացեալ արանցն կալան զՓաթ-
րիկն եւ աստ անդ հարեալ գնա, զօձիսն
պատառեալ և զմուշտամին ծիւ ծիւ պատառ-
եալ եւ զբազում ծեծս սուեալ ընդ միմեանս,
և ոչ ետուն զքահանայսն այլ փախուցին :
Իսկ ի լուսանալ առաւօտին գնացեալ Փաթ-
րիկն եւ արդունալ արար գանգատելով նոր
Վէզիրին, որ էր Տալթապան Մուսթաֆա
փաշայն, որ եւ նոր էր եկեալ¹, եւ ունէի
ի կալանս իմ զերիս քահանայս, որք փռանիք
եղեալ էին, որպէս յառաջն գրեցաւ, և
յայտմ գիշերի եկեալ ոմանք կոխեալ զբանտս
իմ և կորզեցին զշղթայս յոտից նոցա և
փախուցին զնոսա, այլ եւ զիս եւ զսպա-
ռաւորս իմ պան հարեալ ծեծեցին, զօձիս իմ

¹ Ամուճաղատէ Հիւսէյին փաշա, երբօրոյդի գե-
րահաչակ Մէհմէտ Քեօքըլիւլիւյի, հինգ տարուան
պաշտօնավարութեան մէջ (Սեպտ. 1697—Սեպտ. 1702)
մեծամեծ ծառայութիւններ մատուցած էր պետու-
թեան, մտնաւ տեղ Գաբըլիցի Գաշնադրութեան ա-
տենի Ալի երեւելի, քաջարի, խորագէտ, ազնիւ, մե-
ծագործ և մեկենաս մեծ Վէզիրը՝ երբ մտնուած
Միւֆթի Ֆէյզուլլահէն և ի խոր խոցուած իր եղբորդի անմեղ
Սլի պէյի դուռով ոպանութեան, հրամարեցաւ և
մեռաւ, Տալթապանը՝ որ թէեւ քաջ այլ կարգալ գրե-
չէր գիտեր, Ֆէյզուլլահէն ձեռքով մեծ Վէզիր եղաւ :
միջնորդ էր և պատերազմուէր. հինգ ամիս վերջը
(25 Յունուար 1703) պաշտօնակն եղաւ և սպանուե-
ցաւ :

¹ Հինգ հարիւր գահեկան, որ այն ժամանակ շատ
մեծ գումար էր :

² Թւիթրսալ, Բաասթու :

³ Էլչի. գեղական :

պատահեցին եւ զմուշտակս իմ: Ընդ որ բարկացեալ Տաթապան Վէզիրն եւ ասէ. Ա՛ կեալուր, դու ո՛վ ես, որ զբանտս եւ զշրջթայս ունիցիս եւ զպարտաւորս արգիլես, եւ եթէ կալար զնոսա ընդէ՛ր ոչ ածեր առ մեզ: Եւ հրամայեաց հարկանել զգլուխ նորին և իջուցանել զնա ի Ղանլի Ղուլին², որ եւ արարին իսկ. եւ մնաց անդ աւուրս ինչ եւ ապա ի ձեռս Մուֆթուն իւրոյ արձակեցաւ. մանաւանդ հաճեալ զկամս Վէզիրին եւ զոսյիս³ նորին, իբրեւ քսակս ինն մսեաց եւ ել. եւ եդ բանս ընդ նոսա թէ այն տամ ես զայսքան քսակս. զի զարսն զայնոսիկ որք զքահանայն փախուցին եւ զիս ծեծեցին՝ ի քիւրէկ առաքեալիք: Եւ զկնի ելանելոյ նորա ի բանտէն յանկարծ կալան զարս հինգ իջուցեալ զնոսա ի խանութիցն իւրեանց եւ եւ առաքեցին զնոսա յիստամպոլ ի քիւրէկ: Եւ մինչ նա յետրէնէ զայս չարիս գործէր որպէս զՂէզլիզտիւանոս յարեւմուտս, նոյնպէս եւ վէքիլ եւ փոխանորդ նորին Իզմիրցի ունի սեւազլուխ Յովհաննէս անուն³, առաւել եւս չարագոյն քան զուս, զգանազան ոճիրս եւ զանօրէնութիւնս յօրինէր որպէս զՄաքսիմիանոս յարեւելս, այսինքն յիստամպոլ: Քանզի եւ սա յետ յազում չարագործութեանցն՝ յաւել եւս զի զերիս արս երեւելիս ի քաղաքէս չարախօսեաց ի իստամպոլու Ղայմախամին, եւ ետ արգելուլ զնոսա ի բանտի եւ ոչ եթէ զերիս արս միայն չարախօսեաց, այլ եւ զբազումս, քանզի ումանք ի նոցանէ փախեան յետրէնէ. եւ ումանք թաքեան, եւ զտունս թաքչելոցն ըստ յառաջնոյն սարասի գիշերով կոխեալ զտունս նոցին որոնեալ զնոսա եւ ոչ գտին: Եւ իբրեւ ետ արգիլել զերիս արսն տատ եւ փոյթ ընդ փոյթ ազդ արար Փոթրիկին, եւ նա հրաման հանեալ ի Վէզիրէն եւ յղեաց աստ, վասն որոյ ետուն եւ զնոսա ի քիւրէկ որ և մնացին զամիսս ինն եւ ապա հազիւ ելին:

(Շարունակելի)

² Գանլը-Գուլը, գուր արեան,
³ Բէիս, գլխաւոր, վերակացու: Նոսե Արտ Գործոց պալատնեայ:
³ Յովհաննէս Զմիւռնիացի, որ ապա Պատրիարք եղաւ և խոյժօրէն հայաձեռն կաթողիկէները, և Նահատակեց զՏէր Կոմիտաս, ինչպէս ընդարձակօրէն կը պատմուի իր վարքին մէջ:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՅ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ա.

«Նայէ որ մարդաւեր բլաս,
 «հանդակասաւ, քաղցրաբարոյ»
 «հեզ, բարեկիրք եւ բարեմոյն,
 «եւ պիտի բլաս սիրելի»:
 (Շար.)

Դ.

«Հեզ բլաս»

Այս սիրուն յատկութեամբ, որով մեծաւոր մը շնորհալի կերպով մը կ'ընդունի իրեն զիմողները, մանաւանդ միեմերն և պաշտօնի վրայ դանուող անձինք օժտեալ բլալու են: Ուրիշներէն որչափ աւելի վեր է մէկը՝ իւր աստիճանաւ կամ իւր ծննդեամբ, այնչափ աւելի քաղցրութիւն և հեզութիւն ունենալու է: Ո՛վ դուք, որ մարդկանց սիրոյն այնչափ նախանձաւոր էր, ջանացէ՛ք զձեզ մարդասէր և զիւրամատչելի ընծայել, ցուցուցէ՛ք ամէնուն այդ բարի, պարզ և ազնիւ կերպը, որ սրտերը իրեն կը դրաւէ: Այնպէս մը վարուեցէ՛ք որ, երբ մէկը ձեր քովէն մեկնի, ձեզմէ սիրաշահուած բլալուն հաճոյքը կսրենաք զգալ, և դուք ձեզմէ գոհ մնալ: Ձեր խօսքերէն բարկութիւն և ամբարտաւանութիւնը վտարեցէ՛ք, որոնք մեծութեան վրայ բան մը չեն կրնար աւելցնել, մեծերը շատ բանէ կը մերկացնեն: Ձեր ընդունելութեամբ կանխեցէ՛ք փարատել ակնածանաց այն դժուարութիւնը, որ չի համարձակիր ձեզի մօտենալ, և քաջալերեցէ՛ք վախկոտներուն վարանքը, որոնք ձեզի հետ խօսելու կը քաշուին: Գաղղիոյ փոքրիկ քաղաքի մը քաղաքապետը, Թապաւորին առջի ճառ մը խօսելու որոշուած բլալով, քաղաքին բանայինքը անոր մատուցանելով ըսաւ: «Տէր արքայ, մեր ուրախութիւնը, Ձեր Վեհափառութիւնը տեղնելով այնչափ մեծ է, որ... խեղճ մարդըն այնպէս մը պապանձած մնաց որ ի դուր

(*) Տես թիւ 140, էջ 549:

իւր իշխողութիւնը օգնութեան կանչեց, իւր արտասանած վերջին բառերը նորէն կրկնեց կակաղելով. «Այո, ըստ թագաւորն անոր սիրուն կերպով մը, ձեր զգացած ուրախութիւնը այնչափ մեծ է, որ չէք կրնար զայն արտայայտել»:

Իրենց հաճոյից պահած և մարդիկներէն ձանձրացած շատ մը մեծեր այլեւս դարչանքով կ'ընդունին զանոնք. ո՛րչափ խոտասիրտ ծնած ըլլալու է մէկը, որ նոյն իսկ բարի երեւնալն իրեն ծանր գայ, որ սիրոյ և յարգանաց հաւաստիքը, զոր ստորակարգեալք կը մատուցանեն իրեն, անտարբերութեամբ ընդունի:

Ստոյգ է թէ, յաճախ միայն բարկացող բնաւորութիւնն է, քան թէ ամբարտաւանութիւնը, որ մեծերուն գէձքը այդ ախուր ամպերով կը ծածկէ, որոնք, իրենց մօտենալ ուզողները կը հեռացնեն և կը վախցնեն: Բայց բարկացող բնաւորութիւնը մեծութեան յարակից արտօնութիւն մըն է արդեօք, որ կարող ըլլայ յայտ գլորենք արդարացեալ, և կիրք մը, մոլութիւն մը կրնայ ուրիշ կըրքի կամ մոլութեան մը օրինաւոր արդարացում ըլլալ: Միթէ աւելի ներքեալ պիտի ըլլայ մեծերու, աշխարհիս երջանիկներուն, որոնց ուրախութիւն եւ հաճոյք ամէն տեղ կ'ընկերանան, ոխուր, դժնդակ, անմասնելի ըլլալ, քան այն աննշան եւ թշուառ մարդիկներուն, զորոնք աղքատութիւն, ընտանեկան պէտք եւ ամէն տեսակ ամենաժանր հոգի կը շրջապատեն: Իշխանութեան եւ զօրութեան ըրածին ներքեւ արդէն հեծողներուն վրայ, իրենց արտառոց թերութեանց եւ քմահաճոյից բեռներն այլ աւելցնել որպիսի բարբարոս իրաւունք է: Հնդկականակն պէտք չէ՛ր որ, իշխանութեան բարձրութեան ամենագեղեցիկ արտօնութիւններէն մին նկատէին, իրենց գիմողներուն վշտերը՝ անոյշ եւ հեզ կերպով թեթեւցնելը, եւ միթէ պաշտօնի վրայ եղող անձանց եւ տէրութեան պաշտօնէից համար նոյնիսկ անհրաժեշտ պարտք մը չէ՛ անպէս վարուիլը, իրենց մօտենալը նուազ դժուարին, եւ իրենց գլորենք աւելի հաճոյական ընծայելով: Հնդկութիւնը ճշմարտութեան ճամբան կը հարթէ, այն վստահութեան շնորհիւ, որ ներշնչէ, և դժբաղդներուն համար միակերպութիւն կը հայթայթէ. կ'ուզէ՛ք արդեօք իրենց կենաց դառնութեան ձեր արհամարհանքը, ձեր մեծամտութիւնները, ձեր տմարդութիւնները, և թերեւս զանոնք տեսնելու և լսելու մասին ձեր ըրած մերժումներն ալ աւելցնել: Քիչ մը հե՛զ եղէք, և իրենց հանդարտ գիշերներ անցնել պիտի տաք: Ո՛վ և ի՞նչ բան պիտի կարենայ անոնց հոգւոյն յուզումը հանգարտեցնել եթէ ոչ քաղցրութիւնը, եթէ դուք զձեզ ձեր անհամբերութեան թող տալով, միշտ դատան և անմատչելի ըլլաք, ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը:

Հարկ է խոստովանիլ թէ, այդ տեսակ ընդունելութիւնները դժուարին, անախորժ և երբեմն նաեւ ծանրաբաղտուկ են: Դատաւորներ, պաշտօնակալներ, մեծաւորներ, ահաւասիկ ձեր վիճակին բարիքն ունիք, ուրեմն հարկ է նաեւ անոր պարտքերն ալ ունենալ: Այն պաշտօններն, որ զձեզ ուրիշ մարդիկներէն գերի վերոյ կը դասեն, իրենց օգտին համար սահմանուած են: Հասարակային աւագութիւնները՝ ընկերութեան պիտոյից կը պարտին իրենց հաստատութիւնը, և իրեն անդամներէն ոմանց ձեռքն յանձնուած իշխանութիւնը, լուծ մը ըլլալու չէ, եթէ ոչ անոնց, որ զայն կը գործադրեն, եւ ոչ անոնց, որ կը դիմեն անոր, ապաստանարան մը գտնելու համար հոն:

Թարգմ. Ն. Մ. Վ. ԱՃԻՄԵԱՆ

(Շարունակելի)

ԼՈՒԻ ՎԵՅԵՐ ՊԱՐԱՊԱՐԻՐԻ ՄԵՋ

(Շար. եւ վերջ)

Եւ վերջապէս Լուի Վեյերօ արձակուրդի տուն կը հանգչէր: Հանգչիլ բառը, պարոններ, իմաստ մը ունի, որ ձեր մօքէն չ'անցնիր: Հանգչիլը, անգործ կենալէն տարբեր է: Հանգչիլը՝ երկրորդ օրուան աշխատանքը

խորհիլ և զայն լաւ ընելու վիճակին մէջ
ինքզինքը դնել է։ Հանգչող մարդը խորհրդա-
լաւոր անուշիկով մը գրաւուած է։ մաքին
առջեւ կը լսէ ընելիք գործը, բանալիք ա-
կօսը, քաղելիք հունձքը։ կը մտածէ թէ ա-
մէն ինչ լմնցած չէ, թէ՛ երկրորդ օրը, ար-
շալոյսին, հարկ պիտի ըլլայ աշխատիլ, քա-
լել, պայքարիլ։ Աստուծոյ կ'ըսէ. «Տէ՛ր,
ուժ տուր ինձի՝ որ կարենամ սկսիլ ևս գը-
լուիս հանել իմ ծանր աշխատանքս»։ Այս-
պէս կը հանգչէր Լուի Վէօյեօ։ Ան սուսերա-
կիր ասպետն էր յաւիտենական ճշմարտու-
թեան։ Մենք սուրեր ենք, — կը գրէր օր
մը Բոնմարթէնի։ Յօտե՛նք, կտրե՛նք, տա-
պալե՛նք, ոչ թէ զուարճանալու համար, այլ
պաշտպանելու համար այնքան դեղեցիկ եւ
սուրբ բաներ, զորս Աստուած ուզեր է որ
միան սուրին գեղեցկութեան եւ սրբութեան
ետեւը։» Եւ երբ Վէօյեօ կը գաղտնի հար-
ուածելէ, երկրորդ օրուան կոտորին եւ աշխա-
տանքին պատրաստուելու համար էր... Կը
յիշեմ միջադէպ մը զոր ինձի կը պատմէր.
տղայութեանս ատեն, գիւղիս Ժողովրդապե-
տը։ Ինք՝ Լուի Վէօյեօն անսած էր զպրոցի
մը սեղանին վրայ՝ գէմքը զուարթ, եւ ա-
խորժակը բաց, արձակուրդի մէջ գտնուող
զպրոցականի մը պէս։ Կերակուրէն վերջը
աշակերտները իրեն կեցցե՛ր մը երգեցին.
«Կեցցէ՛ առ յաւէտ... Առն՛ղջ, խաղա՛ղ»
Վէօյեօ ոտքի ելաւ պատասխանելու եւ ըսաւ
պարզօրէն. «Բարեկամներ՝, ես ձեզմէ՛ գոհ
չեմ։ Ինձի մաղթեցիք կեանք առողջ և խա-
ղաղ։ Առողջութիւն, կ'ընդունիմ. խաղա-
ղութիւն, ո՛չ երբէք։ Օրագրողները՝ պա-
տեւագումով եւ պատերազմի համար միայն
կ'ապրին։» Կը լսէ՛ք, պարոններ՝, այս զին-
ուորը Կապուայի մէջ չէր անցըներ իր ար-
ձակուողը, եւ իր միօրեայ հանգիստը կը
գրաւէին մօտաւոր պայքարի անուշիկե-
րը։

Պարոններ՝, ձեզի ըսել չեմ ուզեր թէ ար-
ձակուրդի երթալը պատերազմի երթալ է։
Դուք օրագրող չէք, եւ կ'անգիտանաք ըրտ
հաճոյքը՝ արթննալու ամէն առտու ըսելով
իւրովի։ Այսօր որո՞ւն կարգն է։ Ձեզի կը

մաղթեմ. ընդհակառակն, խաղաղութիւն,
երկու երկար ամիսներու խաղաղութիւն, ձեր
հօր հսկող ակնարկին տակ, ձեր մօր քաղուկ
թեւերուն ներքեւ։ Արձակուրդի երթալու
երկը պատերազմական երկ մը չէ։ Լուի
Վէօյեօ ալ կը մըմնջէր զայն խաղաղաւէտ
եղանակով մը։

Աղատութիւն, միտքըս հոգիս ալ պարտա-
սած են իտպաւ։

Տամնումէկ ամիս չորս պատ, օրաթերթեր,
վաճառորդ։

Պէտք ունիմ ուրիշ օգի, եկո՛ւր ինձի բա՛ց
զաշտերն

Եւ պուրակներն ու տափաստանն, անջրպետ-
ներն անշըշուկ։

Պիտի տեսնեմ խոտը նորէն եւ հիւզակներն
հոգեյոյզ,

Ջանգայարկերը սրլացիկ եւ սընակաները խո-
նարհ

Շամբերն յստակ ջուրերուն մէջ... Աղատու-
թիւն, գուն կ'անցնին

Վայրահակ ծառերուն վրայէն փչող հովուն
հետ։

Հանգստացէ՛ք, պարոններ՝, բայց մտածե-
լով առաջիկայ աշխատանքի ժամանակին
վրայ։ Վաղը դարձեալ վարժարան պիտի մըտ-
նէք, միեւնոյն աշխատանքը, միեւնոյն ու-
սումները պիտի վերսկսիք. վաղը դարձեալ
քննութեան պատրաստութիւն պիտի տես-
նէք. վստը մեծերը պիտի մոտեն իրական,
այսինքն բեղուն եւ պատերազմի կեանքին
մէջ։ Բրիտտոնէական օրէնքը, պատերազմա-
կան օրէնք մըն է, եւ երեքամիայ ծառայու-
թենէն աւելի պարտաւորիչ է։ Մենք ծերերս,
պահեստի զինուորներ ենք, երկրապահներ,
շարժուն պահակներ, ինչպէս կ'ըսէին ատենով,
և կը սպասենք այլ եւս անյնկու անշտրժ...
պահակներուն կարգը. իսկ դուք, նոր սփռով,
դեռնալիք բանակը կը կազմէք, դուք պիտի
գործէք։ Ձեզի, Ֆրանսայի երիտասարդ կա-
թողիկէներ, ձեզի հարկ պիտի ըլլայ քիչ ա-
տենէն զրօշակ պարզել, պաշտպանել ձեր
սահմանները, յարձակումներ գործել, գա-
ւառներ վերստին աշխարհակալել... Եւ ո-
րովհետեւ աշխարհ — այլազգ չեմ ճշգիր —

կը կուռի մեր եկեղեցիներուն, մեր վարժա-
րաններուն, մեր ընտանեկան յարկերուն,
մեր խիզճերուն դէմ. ներեցէք որ ուղղեմ
ձեր պատկերներուն, գաղնիներուն եւ անվիշտ
ճակատներուն վրայէն, Լուի Վէօյեոյի մէկ
խօսքը, որ իր ամբողջ կեանքը կը բովան-
դակէ. «Ինչո՞ւ հոն չէի, կ'աղաղակէր բար-
բարոսը Չարչարանքի պատմութիւնը լսելով:

Ուր որ կը նորոգուի Յիսուսի Չարչարանքը,
հոն գտնուինք. Կոթիւ մղենք, բուռն եւ հա-
մարձակ կոիւ, ընդդէմ այն ամէն ուսուցիչ-
ներու եւ պոռոտախօսներու, որոնց պատիր
գիտութիւնը անգէտներուն աչքը կը չլացնէ:
Դուք ինձմէ խորհուրդ կ'ուզէք, խորհուրդ
կու տամ ձեզի թշնամիին վրայ քալելու:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)

Դ. Տ Ե Ս Ս. Բ Ս. Ն

Եսթեր, Էլիզ, Երզնասումբը

Եսթեր

Ո՛վ գերագոյն թագաւոր իմ,
Միայնակ ու դողահար ոտքդ կ'իյնամ ես ահա՛ .
Հօրմէն լըսեր եմ բիւր անգամ տըղայութեանս ժամանակ,
Թէ դուն նուիրական դաշինք դրիր մեզի հետ,
Երբ քեզի արտահաճոյ և պատուական ժողովուրդ
Մեր նախահայրերն ընտրել, առնել հաճեցար .
Եւ նոյն իսկ քու սուրբ բերանովդ ստէպ իրենց խոստացար
Սերճանդ անհամար և յաւիտեան տեւական .
Աւանդ, ապերախտ ազգն օրէնքդ ըրաւ ոտնակոխ .
Ժողովուրդդ սիրական դրժեց իր սուրբ հաւատքին .
Իր փեսան թողուց լըքեց, հօրմէն իսպառ հեռացաւ .
Օտա՛ր աստուածներու մատոյց պաշտօն ամբարիշտ .
Արդ այլազգի թագաւորաց բռնութեան տակ կը հեծէ .
Բայց գերութիւնն ալ հերիք չէ, զինքը կ'ուզեն փողոտել .
Մեր գերեզմարքն ամբարտաւան կը քամահրեն արցունքնիս:
Յաջողութիւնը զէնքերնուն կը վերագրեն իրենց դից,
Եւ հիմայ կը յաւակնին մէկ մահացու հարուածով,
Լեւոնդ եւ ժողովուրդդ ու սուրբ տաճարդ անհետել .
Այսպէս, այնքան հրաշքներէ վերջ վատ դաւաճան մը, Տէր իմ
Պիտի զօրէ՛ պատգամներուդ հաւատքն ընել բնաջինջ .
Պիտի զրկէ՛ տիեզերքն ամէնէն թանկ պարգեւէդ .
Սուրբէն գոր խոստացար և որուն մէնք կը սպասենք .
Ո՛չ, ո՛չ, Աստուած իմ մի՛ թող տար որ աս վայրագ ժողովուրդ
Համալի արբշի՛ւ մեր արիւնով, այն բերանները փակէ
Որոնք միայն, աշխարհի մէջ, կը տարփողեն բարիքներդ:

(*) Տեւ Թիւ 111, էջ 571

Ամէն սուտ աստուածներն ամօթապա՛րտ տապալէ՛,
Իսկ ե՛ս, զոր կը պահես այս անօրէն մարդոց մէջ,
Դիտե՛ս թէ քանիօն կ'ատեմ իրենց ժանտ տօներն,
Ու զարշելի եւ սրբապիղծ կը համարիմ գլխովին
Իրենց սեղանն ու հանգէսներն եւ նուէրներն անարժան.
Նոյն իսկ այս պերճութիւնն որուն եմ արդ մատնուած,
Այս ապարօշն որով ինձ հա՛րկ է զարդարուած երևնալ,
Այս չըքեղ օրերուն մէջ, որ հպարտութեան են ձօնուած,
Առանձին եւ ի ծածուկ կ'ընեմ իսպառ ոտնակոխ.
Փռչին այս սին զարդարանքէն կը համարիմ նախընտիր.
Ինձ լոկ արցունքն է սիրելի, որ աչքերէս կը հոսի:
Կը սպասէի քեզմէ կանխաւ բացորոշուած վայրկեանին
Որ պաշտպան ժողովուրդիդ հանդիսանալ իշխէի:
Այդ ժամն է, Տէ՛ր, եկեր հասեր. հլու հնազանդ քու ձայնիդ,
Անվեհեր պիտի ելլեմ առջեւն անեղ արքային:
Քեզի համար, Տէ՛ր իմ, կ'երթամ. ուղղէ՛ քայլերս դողդոջուն,
Այն սէգ առիւծին քով որ զքեզ բնաւ չի ճանչնար.
Զիս տեսնելուն պէս հրամայէ՛ որ իր զայրայթն ամօքի,
Իրեն հաճոյական հրապոյր մը տո՛ւր խօսքերուն:
Քեզի կը հնազանդին հովն ու մրրիկ եւ երկինք:
Սրտմտութիւնն իր սոսկալի մեր թշնամեաց դէ՛մ դարձուր:
(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

Տ Օ Ն Ա Յ Ո Յ Ց

- Սեպտեմբեր 21 † Կիր. դժ. Բ. զկնի խաչին
22 Բշ. դկ. Մամասայ եւ Փիլիսիմոնի
եւ Սիմէոնի Սիւնակեցին:
23 Դշ. ամ. Սրբոց Կաւսանաց Փեքոն-
եայ եւ Մարիանեայ:
24 Դշ. ակ. Պահոց:
25 Եշ. բժ. Հայրապետացն Անթիմոսի
եւ Նրանոսի:
26 Ուրբ. բկ. Պահոց
27 Շր. գժ. Գեորգայ զօրավարին եւ
Ադոկսոսի եւ Ռոմանոսի:

ՍՈՒՐԲ ԱԼՓՈՆՍՈՍ ԼԻԳՈՒՈՐԻ

Տօնը՝ 2 Օգոստոս

(Շար.)

Հագեւոր կրթութեանց ատեն, ամէն օր, առաւել,
իրիկուն, քարոզիչները չափահասներու կը քարոզէին եւ
աղոց քրիստոնէական վարդապետութիւն կը սարկե-
ցնէին: Առջի երեք իրիկունները ամենէն բազմամարդ
փողոցները մասն կու գային՝ ձեռքերնին խաչ մը բռն-

նած, եւ կը հրաւիրէին բնակիչները որ յիշեն իրենց
վերջինքը եւ փութան ականջ գնելու Աստուծոյ խոս-
քին: Յետոյ երեք քարոզ կը տրուէր՝ մեղքի, դժոխ-
քի եւ գալթակալութեան վրայ: Այս քարոզները Ալ-
փոնսոս իրեն վերապահած էր: Ապա երեք չորս օր
եւս կը քարոզէին աղօթքի կարեւորութեան վրայ,
Յիսուսի չարչարանաց վրայ, զոր այնքան սրտառու
կերպով կը նկարագրէին մինչ բոլոր ունկնդիրները սիրոյ
խանդաղատանքի արցունքներ կը թափէին: Ուրիշ քա-
րոզներ եւս կը տրուէին աղոց, երիտասարդաց, ամուսնի
կիներու, աշրիներու եւ ամուսնացեալներու համար:
Կրթութիւնը կ'աւարտէր ընդհանուր Հաղորդու-
թեամբ. եւ յարատեւութեան վրայ քարոզուելէն յե-
տոյ բոլոր ժողովուրդին հանդիսաւոր օրհնութիւն կը
տրուէր: Ձեռմեռանդաւթեան ճամբուն վերջին օրը, Ալ-
փոնսոս չարչարանաց յիշատակը մտքերու մէջ անջինջ
դրոշմելու համար, քաղքին կամ դիւղին մուտքին
վրայ կը կանգնէր, իր բացատրութեամբ Գողգոթայ
մը: Չորս ընկերներու հետ, որոնք եւս իրեն պէս մէյմէկ
ծանր խաչ ուսերնին կ'առնէին, կ'երթար հոն ուր ա-
նոց պիտի տնկուէին, եւ զանոնք կանգնելէ յետոյ,
Չարչարանաց Խորհուրդին վրայ մտածական մը կ'ա-
ռաւարկէր, որ ամէնուան սրտին մէջ խոր տպաւորու-
թիւն մը կը գործէր: Բեւ՝ ելլելուն պէս, ամէնուն
ջերմեռանդութիւնը կը յուզէր: Շատերը գարձի եկան

միայն հեռուէն գիտելով իր կեցուածքն ու շար-
ժաւածքը: Հոգեւոր կրթութեանց պտուղը ապահո-
վելու համար: զանաք կ'երկարէր 45, 30 օր, մինչեւ
որ ժողովուրդը կատարելապէս վերանորոգուէր: Նոյն
միջոցին հոգ կը տանէր կազմելու բարեպաշտական
ընկերութիւններ այլ և այլ դասակարգի անձերէ, որ-
պէս զի իրարու բարի օրինակ տալով կրթութեան
արդիւնքները հաստատուն և տեւական ըլլան:

Իր առաքելական ջանքերուն և հրաշալի գործե-
րուն լուրը թաղաւորութեան ամէն կողմը տարած-
ուելով: Թագաւորը և աւագ կղերականները որոշեցին
զինքը բարձրացնել եպիսկոպոսական առաքիճանին:
Նախ արքեպիսկոպոս անուանուեցաւ Բալերմոյի:
Բայց ա՛յնչափ ազօթեց Ասաուծոյ, ա՛յնչափ մեռու-
ցուցին ըրաւ որ վերջապէս յաջողեցաւ ազատիլ
այդ պաշտօնէն: Քիչ յետոյ կղեմէն Ժ.Վ. զինքը
անուանեց եպիսկոպոս Փլթաց-Սուրբ-Ագաթայի թա-
փուր թեմին: Ալփնոսոս ստիպողական նամակներ գրեց
իր բարեկամներէն շատերուն և նոյն իսկ Քահանա-
յապետին. որոնց մէջ անոնց կը յայտնէր իր անատա-
կութիւնը, իր յառաջացեալ հասակը, իր վատաւոր-
ջութիւնը և իր ու ե պաշտօն չընդունելու ուխտը,
և կը խնդրէր որ զինքը ազատեն ոչոքան ծանր բե-
ռէ մը: Բայց Սուրբ Հոգին ազդեց Քահանայապետին
որ Սուրբ ստիպէ ընդունելու: Այն ատեն Ս. Քա-
հանայապետը հրամայեց: Երբ Ալփնոսոս Ս. Հօր նա-
մակը առաւ, գլուխը ծռեց և ըսաւ. Աստուած կ'ու-
զէ որ եպիսկոպոս ըլլամ. Ես'ս լաւ, եպիսկոպոս պիտի
ըլլամ: Քանանայապետը հրամայեց. պէտք է որ հնա-
զանդիմ: Սակայն իր միտքանները յաջողեցան աշնպէս
կարգադրել տալ որ չգազրի նաև իր կարգին Մեծա-
ւոր ըլլալէ: Այցելեց Լօրէդոյի Սուրբ տունը, և վեր-
ջապէս եպիսկոպոս անուանագրուեցաւ Հռոմ, Սերուհի
Մարիամ եկեղեցւոյն մէջ 1762, յունիս 20ին: Գնաց
իր եպիսկոպոսական քաղաքը Սուրբ-Ագաթայ, ուր ժո-
ղովուրդէն ընդունուեցաւ ուրախութեան և մեծա-
բանաց արտակարգ հաւատարմեանով:

(Շարունակելի)

ՀԱՎԵՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐԲԷՆ

Գրեմ Ա.—Գլ. ԺԳ.—Փորձութիւններու դէմ կենալու վրայ:
(Շար.)

Ոմանք իրենց դարձին սկիզբը աւելի ծանր փոր-
ձութիւններ կը կրեն, ոմանք ալ վերջը:

Իսկ ոմանք զոքոք իրենց ամբողջ կեանքին մէջ
փորձութիւններ կը կեցուին:

Ուրիշներ քաւական քերէն կերպով կը փորձուին՝
սաստաւծային կարգադրութեան իմաստութեան եւ ար-
դարութեան համաձայն, որ կը կշռէ մարդոց վիճակն
ու արդիւնքը, և ամէն քան կը նախասահմանէ ի
փրկութիւն իւր ընտելաներուն:

ԼՈՒՐՏ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵՆՆԻ ՄԻՒՃԻԶԱԹԼԱՐԸ

— 606 —

Պիր Բիլիսատա հազիգաթ մէվճուտ օլ-
տուղընըն պաշլընա ալամէթլէրինտէն պիրի
տէ օ Բիլիսատա միւճիգաթլար վազը օլմաար
տըր:

Դաթօլիք Բիլիսատաընն սուրէթը թէէս-
սիւսինտէքի, եիրմի ասրտան պէրի, հէր
տիւրլիւ մէվանիէ րաղմէն, տէվամընտաքի
միւճիգաթ, հատտի զաթընտա օ ուլու Բի-
լիսանըն գուտսիյէթինի, հազիգաթընը իս-
պաթա վաֆի վէ քեաֆի իսէ տէ, մամա-
ֆիյո օ Բիլիսատա հէր պար վէ լաեէնգաթի
սուրէթտէ միւճիգաթլարըն տէվամ իթմէսի
տէ, զէմանըմը միւթէրիզլէրինտէն պազը-
լարընըն թէաննիւտիւնիւ քէսը, վէ գաթօլիք
Բիլիսատա պիր վազըթ Բիլիսատաըն հազըգի Բի-
լիսատա իքէն, սօնրալարը հազիգաթտան ին-
հիրաֆ իթմիշ տիր Եօլընտա իտարէյի լիսան
իտէնլէրին իտտաալարընը իլզամ վէ, միւէս-
սիսի իլահիսի պուլընան Բիլիսատաըն, հէր
տայիմ գաթօլիք Բիլիսատա իլէ պէրապէր օլ-
տուղընը տահա բարլապ պիր սուրէթտէ
թաստիգ վէ իսպաթ իտէր:

1858տէն իթիպարէն հատտուրը հիսապարը
միւճիգաթլարըն պիւթիւն ալէմի հայրէթլէր
իլինտէ պրագմըն օլան Լուրտ մաղարասը,
հէր սէնէ եէնի եէնի հիքմէթլէրէ վէ Ֆէվզ
էթ թապիաթ միւճիգաթլարա մարէզ օլմագ-
տա տըր: Պու կիւնլէրտէ ալընան Ֆրանսա
ճէրիտէլէրինէ նաղարէն պու սէնէքի, Ֆրան-
սանըն միլլի ուխտագնացութիւնը զէմանընտա
օրատա իլէնիլէն միւճիգաթլար հէմ չօգ օլ-
մուշ վէ հէմ տէ էմալինէ Ֆայիգ պուլըն-
մըն տըր:

Հէր սէնէ պու միլլի ուխտագնացութիւն
միւնասէպէթիլէ օլտուղը կիպի, պու սէնէ
տէ, տահա ուխտաւորլար Լուրտա կէլմէզ-
տէն էվլէլ, տիւնեանըն հէր թարաֆընտան,
տինտար, տինսիգ, Ֆրանմասօն, լիպը-բան-
սէօր, մաթէրիայիլիս հէր նէվ մէսլէք սա-
հիպի հազիգ տօգթօրլար, օրատա իքրա օ-

լուսնուեօր տինիլէն միւսնիւթլարըն մահիլէ-
թինի կէօրմէք, ծնլարը պիղզաթ թէֆթիլ
իթմէք, վէ շայետ օրատա կէօրմէլէն շիֆա-
լարա թապիի սուրէթաէ, ֆէհն տոյիթէսին-
տէ մանա վէրիլէսիլիթաէ, միւսնիւթլարը
ինքեար իթմէք, խալպըն ալտանտըղըն ի-
լան իթմէք ֆիքր ու մագսատըլա զաթէն
Լուրտա կէլմիլէր վէ հաթթա պու տէֆա
կէլէն տօթթօրլարըն առէտի, տահա օգոստո-
սըն իսլթիտալարընտա եիւզ էլլի եէտիլէ պա-
լիլ օլմուշտը:

Օգոստոսն էվասիթինտէ, Լուրտ ճիվա-
րընտա օլան շէհիլէրտէն վէ գասապալար-
տան րէք չօգ զիյարէթճիլէր կէլմիլ վէ Ֆը-
րանսանըն ուզադ նօգթալարընտան կէլէճէք
օլան ուխտաւորլարա պէքլէմէքտէ իտիլէր:
Եէվմիլէ օթուզ թրէն, պըրգ թրէն վէ պա-
զէն տէ էլլի թրէն վիւրուա խտէր վէ Ֆրան-
սըզ գալմը նէճիպինին սընթընա ալիտ, ա-
տէթլէրի միւսնիլէիֆ, լիսանլարը ֆարգը
ֆագաթ իպրար իթտիթլէրի իմանտա հիլ պիր
ֆարգ պուլընմայան պինլէրճէ զայիլէր վա-
կօնլարտան էնէր արապալարա, եա թրամ-
վէլէրէ աթըլըլար վէ եախօտ մաշիլէն
Լուրտ մաղարասընն եօլուսը թութարլար-
տը:

Օգոստոս 21 տէ հէր նէ գասար տա ուխ-
տաւորլար ումուսիլէթլէ կէլմիլէր վէ մա-
ղարայը զիյարէթ կիպի, խուսուսի տուալար
կիպի իպատէթլէրտէ պուլընմուշ խաի խտէ
տէ, ասը Լուրտըն րուհը հէնուզ նօգսան
իտի, խաթթէլէր տահա կէլէմէմիլէր վէ ծն-
լարըն նազլինէ թախսիս իտիլէն պէյազ թը-
րէն իւշ սաաթլըգ պիր թէէիսիլէ ուղրա-
մըշտը: Նիհայէթ կիւնէլին զրուպընտան
սօնրա, պէքլէնիլէն օ պէյազ թրէն տէ ըս-
թասիօնա եէթիլտի: Օհ, հէր քէս ծնլարը
պէքլէյօր, հէր քէս օ, Բրիստոսըն խաթթէ
ազալարընա, Լուրտըն օ մուսզգէզ տալլէթ-
լիլէրինէ սապըրտըլըզա ինթիզար իտիլօր-
տը: Խաթթէլէրի օթօմօպիլէրէ կէօթիւրէճէք
թէճկէրէլէր թա էօյլէտէն կէթիլիլմիլէր վէ
ծնլարը թաշընաճադ օլան մէմուրլար սթա-
սիօնտա ախըր մէվպի իթմիլէրտի: Օրատա
հազըր պուլընտան էհալի, զէվալը խաթթէլէ-

րին, օ, իլմին վէ ինսանի չարէլէրին տէրա-
լէրինէ տէրման օլմագտան աճիզ գալտըզա-
րը պիչարէլէրին եօլ զահմէթինէ նաալը թէ-
համմիլ իթտիթլէրինի տիւշիւնիւպ տուր-
տուզլարը սըրտտա, իշթէ պէյազ թրէն ու-
զագսան կէօրիւնտիւ վէ սթասիօնա տախիլ
օլուպտա եալաշ եալաշ իլէրիլէտիլի վաղըթ
վալկօնլարըն գարուլարընտան «Ողջոյն քիւզ,
Մարիամ» սէտալարը իշիտիլիլօրտը:

Թրէն տուրուր տուրմազ, հէր թարաֆտա
պիր մուհիյա սիւքիւթ հիւքիւմիլէրմա օլուր-
խաթթէ պագսն մայրապետէր օրատա հա-
զըր տըրլար: Թէճկէրէ մէմուրլարը իքիլէր,
իւշէր տանէ վալկօնլարա չըգարլար վէ զա-
յիթ շէֆիլ վէ նազիք սուրէթաէ խաթթէլէ-
րի աշաղը էնտիլիլէր: Պէրիտէ պիր քէօ-
թիւմ, էօթէտէ բարլադ կէօզլիւ, պալ մու-
մը րէնկինտէ պիր վէրէմիլ: Պիր թարաֆտա
կանկրէնլէրէ թութուլմուշ պիր պիչարէ:
Պուրլարը աշաղը ալապիլմէք իշուսն նէ ի-
թինա, նէ ինթիւմ, նէ ճէսարէթ վէ նէ
հիւրէք լազըմ տըր: Ֆագաթ պու շէյէ մէ-
մուր օլտնլար վաղիլիլէրինի էյի իպօա խտէ-
պիլմէք իշուսն զաթէն հարարէթլի պիր հա-
զօրդուլիւնա հազըրլանմըշտըրլար: Ինսանի
թապիլթըն նէֆրէթինէ վարշը գօյապիլէճէք
պուվվէթէ մալիլ օլմուշտըրլար:

Սրաոր հարմ սաաթ պիլէ կէլմէզտէն,
260 խաթթէլէր պէօյիք օթօմօպիլ արապա-
լարա նազլ օլուսըրլար վէ մաղարայա տօղ-
րու եօլա րէվան օլուսըր: Ալլահտան վէ
Սուրբ Աստուածածինտէն մատա հիլ պիր իւ-
միտլէրի պալմամըշ օլան պու պիչարէլէր հէման
վաղըթ զայ իթմէքսիլին, տօղրու Լուրտ
Աստուածածինին այաղլարընա կիթմէյի ար-
զու խտէր վէ Լուրտ Սուլթանընն Բենար-
ալինէյէ կէօրիւնտիւլա մաղարայա եիւզ
սիւրմէյի իսթէրլէր, իշթէ օ վաղըթ, առէթա
պիր Շարդ մէմէքէթինէ պէնզէյէն, հէր շէ-
յին զայըր մուսթադամ սուրէթաէ կէօրիւն-
տիւլիւ, օտուսն թաշընտան մանտա արապա-
լարընն, գասապ արապալարընն, ֆըլըլար
կէօթիւրէն համմալլարըն, աթլըլարըն, եա-
կալարըն, գօյուսլարըն, օթօմօպիլլէրին,
թրամվէլլէրին, թաշը մէրքէպլէրին հէր

եան եանա ամէտ չիւտ իթտիքլէրի օ չէհիր տախիլինտէ, խահ նա խահ պիր թէէտիւրէ պրապան պիր թափօր թէշքիլ օլունուր:

Խաւթէլէրին եանընտան կիտէն սէտիյա մէմուրլարը վարդարանլարընը չէվիրիւրէր վէ տահա աղղլարընը աչաճաղ գատար գուլ վէթլէրի գալմըշ օլան խաւթէլէր տէ պունլարա պօղունուզ պիր սէս իլէ ճէվապ վէրիւրէր վէ պու ալայ, էթրաֆտաքի կէօրիւլէն գարմագարըշլըղա բաղմէն, քէմալը ինթիզամլա մաղարայա վէ մաղարատան տա խաւթախանէլէրէ կիտէր: Կէօթէրիլէն տիգ գաթ վէ իթինայա բաղմէն վազը օլան աւրապա սարսընթըլարընա խաւթալար թարաֆընտան հիչ պիր շիքեայէթ իշիտիլմէտիքուն պաշգա, տուալար իտէրլէր: Վէ կիթտիքճէ տտէտի արթան զիյարէթճիլէր տէ քէնտի տուալարընը պու զէվալըլարըն տուալարընա գաթարլար վէ քէնտի միւճիգաթլարըլա գուտրէթինի իզհար իթմէտի իշուն Վալիտէթուլլահա բիճա վէ նիյաղլարտա պուլունըրլար:

(Մապաւի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ար հաւատաւ թէ գերման կառավարութիւնը մեծ ջանքեր կ'ընէ Հռոմի Բաճաւայապետական Վարչութեան մարմնոյ մէջ ունենալ Գերմանիոյ գերման կղերէն կարգինալ մը — Էյօ քր լառի այս լուրը հաղորդելով կը յաւելու:

«Այս գերման վարչական կարգինային անուանումը, եթէ աեղի ունենայ, նոր մեծագոյն պատճառ մը պիտի ըլլայ ի նպատակերս հաստատութեան գիւտնագիտական յարաբերութեանց Թրանսայի եւ Վաւիկանի միջեւ. որովհետեւ հասարակապետական կառավարութիւնը անկերելի յանցանք մը պիտի գործէր եթէ թշնամի կամ նախանձորգ կառավարութիւնները միայն օգուտ քաղէին, բարոյական աւագ հեղինակութիւնէն, զոր միշտ պիտի ունենայ Ս. Աթուր, եւ Հռոմ մէջ զբաւէին, թէ՛ աւաւթլութեանց եւ թէ պաշտպանութեանց տեսակէտով, այն տեղը զոր Թրանսապրաւաճ է աշխարհ երկար ժամանակ»

Այս բանակցութեանց ուր հասնիլը յայտնի չէ, բայց սա յայտնի է: Վաւիկանի եւ Թրանսայի մի-

ջեւ յարաբերութեանց խզումը մեծապէս կը փաստէ, յատկապէս Արեւելքի մէջ, Փրանսական աղղեցութեան:

* Մակեդոնացի պուլկար գաղթականները Քէօս-թէնտի մէջ ժողով մը գումարելով Եւրոպայէն Մակեդոնիոյ համար ինքնօրինութիւն խնդրել որոշելէ յետոյ կը յաւելուն:

«Իսկ եթէ Եւրոպոյ միտ չգնէ Մակեդոնիոյ Պուլկարներուն այս խնդրանքին, ժողովս կը վճռէ հետեւիլ փրկութեան սա երեք միջոցներուն, որոնց վերջինը միաձայն հաւանութեամբ ընդունուած է:

1. Գրգռութիւն հանել Մակեդոնիոյ Պուլկարներուն մէջ, մանաւանդ գիւղերը, պաննք Պուլկարիս գաղթեցնելու համար, բայց նախապէս կառավարութիւնէն խնդրելով որ անոնց տեղաւորուելուն համար պէտք եղած հողերը եւ միջոցները որոշէ եւ հայթայթէ:

2. Խնդրել Գեր. Էկլարքէն որ պուլկար ժողովուրդին փրկութեան համար հաճի զոհել օրթոտոքութիւնը եւ զմեզ միացնել Հռոմի հետ:

3. Խնդրել Ս. Բաճաւայապետէն որ Մակեդոնիոյ մէջ Պուլկար Էկլարքին իշխանութիւնը հաստատէ եւ ընդունի միացեալ Պուլկարներու համար կաթողիկէ տէրութեանց պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ երաշխիքը հաւատարմելոց եկեղեցական եւ դպրոցական ինքնօրէնութեան:

* Մեծահաշակ, կարգ. Վիլիս Թութօ, Վեդ. կարգէն, վախճանեցաւ Հռոմի մէջ եւ մեծ հանդիտաւորութեամբ թաղուեցաւ:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Ս. Բաճաւայապետին գահակալութեան տասնէրորդ բարեկշան տարեգարձին տաթիւ Ամին. Հոգեւոր Տեսան գրած շնորհաւորական նամակին ի պատասխան, Նորին Սրբութիւնը օրհնութեան նամակ մը գրած է լի հայրական զթով, օրհնելով Նորին Ամենապատուութիւնը, Կղերն ու կաթողիկէ հաւատացեալ ժողովուրդը:

* Գեր. Աշճեան Մկրտիչ Վ. հետեւդացած ըլլալով, Ս. Գեորգ. հիւանդանոցին մէջ կը խնամուի:

* Սեպտ. 14ին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ պատարագներ մատուցուեցան եւ հանգստեան պաշտօն կատարուեցաւ նոյն եկեղեցւոյ հոգարարձու Գեր. Սարգիսեան Յովսէփ վարդապետին հօր Գործիէի հոգւոյն համար, որ Ալատանի մէջ, եկեղեցւոյ Ս. Խորհուրդներով զօրացած կնքեց իր 62ամեայ կեանքը Օգոստոս Կին: Եկեղեցին լի էր խառն բաղմութեամբ, ներկայ էին բազմաթիւ քահանաներ, որոնցմէ վեցը նոյն օրը հոն պատարագեցին, հանգուցելոյն հոգւոյն համար:

Այս ցուաքին կորուստին համար մեր վշտակցութիւնները յայտնելով Գեր. Սարգիսեանին, կը մաղթենք իրեն Ս. Հոգւոյն միթիմարութիւն եւ հանգուցելոյն յաւիտեական երջանկութիւն:

ԷԶՄԻՍՏՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Սեպտ. 12ին Ազգային Ժողովը նիստ գումարեց Մայր-Եկեղեցւոյ մէջ նախագահութեամբ տեղապահ Տ. Գաբրիէլ Ս.ի և ատենակալութեամբ Տրք. Տաղաւարեան Էֆ.ի Ներկայ էին 81 երեսփոխաններ, Բուհարկութիւն կատարուեցաւ, արդիւնքը եղաւ հետեւեալը.

Ջաւէն Եպսկ. Տ. Եղիաեան	64
Եղիշէ Արքեպս. Դուրեան	41
Ստեփանոս Արք. Յովակիմեան	4
Սպիտակ	6
Չեռնպահ	2
	84

Չեռնպահ երկու երեսփոխաններն ու վեց սպիտակ քուէ տուողները դաշնակցական երեսփոխաններն էին, որ կուսակցութեան որոշումով չարայայտուեցան:

Տեղապահ Ս.ը շնորհաւորական հեռագիր ուղղեց Տիգրանակերտի Առաջնորդ Տ. Զաւէն Ս.ին, որ հեռագրով իր շնորհակալութիւնը յայտնեց:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Թուրքեւպուլկար պատուիրակները իրենց չորրորդ նիստը գումարեցին Սեպտ. 17ին, Բ. Դրան մէջ: Այս նիստին արդիւնքին մասին հաղորդուեցաւ հետեւեալ պաշտօնական զեկոյցը.

Սահմանագլուխներու խնդիր վերջնականապէս կարգադրուեցաւ: Նոր սահմանագիծը կը սկսի Մարիցայի գետաբերանէն եւ կը վերջանայ Բէս. Վալայի բերանը, Ինէ Ասայի ինսիսակողմը, ՏԻՍԹԵՔԱՆ, ԷՏԻՐՆԷՆ եւ ԳԸՐԻ ՔԻԼԻՍԷՆ բովոյթ Թուրքիայ, իսկ Թուրքիան, Օրքաձոյ եւ Մուսթաֆա Փաշան Պուլկարիոյ:

Սկզբունքով համաձայնութիւն մը գոյացած է եռոյս պէս ազգութեան խնդրին մասին...

*. Հպատակութեան վերաբերեալ համաձայնուելութիւն մը գոյացած է, որով պուլկարական սահմաններուն մէջ գտնուող օսմ. հպատակները և տարուան ընթացքին՝ իրաւունք ունին Օսմանեան կամ Պուլկար հպատակութիւնը նախընտրելու:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

Թօքիոյէն կը հեռագրուի. — Ճարանցիք զօրք հանեցին Նան-Քինկ՝ Ճարանցի բնակիչներուն տուելերը պաշտպանելու համար:

Մեծ միջինկի մը պահուէն, որ տեղի ունեցաւ Թօքիոյ մէջ, ներկաները պահանջեցին որ Մանչուրիական և Մոնթեան խնդիրները զէնքի ուժով լուծուին: Թերթերը կը պահանջեն որ կա՛մ զօրք զբնակի Չինաստան և կամ Կա՛մ Տիբէթ հրաժարի: Առաջադրութեան գէ՛մ մեծ ցոյց մը կը կազմակերպուի:

— Երևաստարք մը տնտեսական եզրու հոս, նամակ մը լոռով, որուն մէջ կը յայտարարէ լծէ տարաքին գործոց նախարարութեան ըստաբանական դիւանին անօրէն ինք պատնետ է:

*. Յունաստանի թագաւորին՝ Վիկտէմ կայսեր ուղղած ճառը մեծ ահաճութիւն և վայրոյթ յառաջ բերաւ: Յրանալի և նոյն իսկ Յունաստանի մէջ, և քիչ մը ամէն տեղ առհասարակ, նկատուելով իրեն Յրանալի հանդէպ ունեցած երախտագիտական պարտուց մէջ ծանր թերութիւն մը: Յոյները ամէն կերպով կ'աշխատին դարմանելու իրենց թագաւորին այս անպատեհ ընթացքը: — Հովանի մէկ զեկոյցը կ'ընէ. «Արտ. գործոց նախարար Մ. Բիշն ընդունեց Բարիկի Հեյլէն գետական Մ. Ռումանսը, որ իր կառավարութեան մէկ հեռագիրը հաղորդեց յայտարարող լծէ Յունաստան լուս գիտէ լծէ Յրանալի ինչ ըրած է իրեն, որով անկեղծօրէն կը փափաքի անհետացնելու ո՛ր և է թիւրիմացութիւն երկու երկիրներուն միջև:»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	593
Յիսուս Քրիստոս	596
Եր. Տէր Կոմիսսս Նահասակին պատմական երկու գրութիւններ	598
Խմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	600
Լուի Վէյոն	601
Եոթեր	603
Եօթնակ Քրիստոնէի	604
Լուիս Աստուածածինին եկնի միւնիզաքար	605
Տեղեկագրական	607

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆԴՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Պ. Արծապանց Շաբաթաբերքի, Բերս, Պայրամ փողոց թիւ 6, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գիւն 5 դանելրան, էջ 144 աւուր քղբակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գլխոցներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱՄՈՒԻ «Տարրական Սկզբունք Բրիտոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր Թղթակազմը 2 դհկն:

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Խուրճիոյ համար, արեւան՝ 40 դիկ. արծ. վեցամսեա ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դիկ.:— Արաստահման՝ ար. ճր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց, 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՐ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրեր: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհառ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն զրկուած ուեւ է յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն գարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան բուրքին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրում ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպարանկան զարժոյց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրեր, տեսներ, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-արեւներ, մասագրներ, եւն., եւն.: Գիները ամսացելի կերպով տրամ են: Գեղեցկագիտական շնորհակալ եւ տպարանկան մաքրութեան կողմանէ յանձնարարները անտարակոյտ գոհ Հպիտի մնան: